

- 11 Եւ մանաւանդ յայնրմ վայրի
Անկիւրիոյ մեծ քաղաքի
Չորս ժամատունք Հայոց Ազգի
Կային ի ձեռս ուղղափառի:
- 12 Այս ինչ տըհաճ չէր Սարգսի
Բայց ոչ կամէր նա յայնպիսի
Երկատուութեան ժամանակի
Գող դէտ երկու ներհակ կուսի:
- 13 Ձինչ եւ իցէ ի վախճանի
Ոչ կամովին այլ յոյժ բռնի
Ձայն յընդունիլ նա զիջանի,
Ի՛նչ կուրեայ դէտ լեալ հաստատի:
- 14 Ապա անտի յուղի անկեալ
Երջանկութեամբ ուղեւորեալ
ՅԱնկիւրիա քաղաք պըճնեալ
Ժաման լինէր փառաւորեալ:
- 15 Ուր նա ըզնոր հօտն ողջունեալ,
Առ հասարակ աջովն օրհնեալ,
Խօրատէր երկուս կողմանս զատեալ,
Խաղաղ սիրով և 'անպարտաւ կեալ:
- 16 Որ ոգւով չափ անդ գուն գործեալ,
Լաւ կարգ պայման կողմանցն եղեալ,
Չանդուռն բերանս սաստիւ փակեալ,
Խօրխտայր յուզչաց ոչ զանգիտեալ:
- 17 Առ առնել զայս նա յոյժ յոգնէր,
Ձի ուղղափառն եւ նայն որ չէր,
Ընդ իրերաց չունելով սէր
Խաշանցն աղմուկ ոչ դադարէր: